ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 07.04.2021թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/19

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

«Գլավսնաբ իմպորտ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ

Ռ. Վարդանովայի (լիազորագիր՝ տրված 02.04.2021թ.),

«Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ-ի ներկայացուցիչներ

Վ. Բաբայանի (լիազորագիր՝ տրված 01.04.2021թ.),

Ա. Մնացականյանի (լիազորագիր՝ տրված 01.04.2021թ.),

քննելով «Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ-ի (հետայսու նաև՝ Պատվիրատու) կարիքների համար համակարգչային տեխնիկայի ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀԿ-ԳՀԱՊՁԲ-21/02» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի (հետայսու նաև՝ Ընթացակարգ) շրջանակներում «Գլավսնաբ իմպորտ» ՍՊԸ-ի կողմից 29.03.2021թ. ներկայացված (30.03.2021թ. վարույթ ընդունված) բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2021/19 բողոք), պարզեցի հետևյալը.

1. **<u>«Գլավսնաբ իմպորտ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>**

«Գլավսնաբ իմպորտ» ՍՊԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) 29.03.2021թ. Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքով հայտնել է հետևյալը.

«Հայտնում ենք Ձեզ, որ «Գլավսնաբ իմպորտ» ՍՊԸ-ն ս/թ. մարտի 8-ին մասնակցել է «Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ-ի կողմից հայտարարված «ՀԿ-ԳՀԱՊՁԲ-21/02» ծածկագրով ընթացակարգին: Ս/թ. մարտի 10-ին, ժամը 11:11-ին «Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ-ի կողմից «Գլավսնաբ իմպորտ» ՍՊԸ-ն էլեկտրոնային նամակով ծանուցվել է իր կողմից ներկայացված հայտում անհամապատասխանության շտկման մասին: Անհամապատասխանությունը կայանում էր նրանում, որ հայտի փաթեթում բացակայում էր լիազորագիրը՝ տրամադրված կազմակերպության տնօրենի կողմից հայտի հետ կապված փաստաթղթերը ստորագրած աշխատակցին: Ի պատասխան տվյալ ծանուցմանը՝ «Գլավսնաբ մպորտ» ՍՊԸ-ն ս/թ. մարտի 10-ին, ժամը 12:49-ին էլեկտրոնային ուղարկել է համապատասխան լիազորագիրը գնահատող հանձնաժողովի էլեկտրոնային հասցեին: Վերոնշյալ քարտուղարի անհամապատասխանության հետ կապված, «Գլավսնաբ իմպորտ» ՍՊԸ-ն այլևս որևէ, ծանուցում չի ստացել:

Ս/թ. մարտի 17-ին, ժամը 17:59-ին «Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ-ի կողմից գնումների պաշտոնական տեղեկագրում հրապարակվել է տվյալ ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի «ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 04»: Մինչև այդ փաստաթղթի հրապարակումը, «ՀԿ-ԳՀԱՊՁԲ-21/02» ծածկագրով ընթացակարգի հետ կապված ոչ մի գնահատող հանձնաժողովի նիստի արձանագրություն գնումների պաշտոնական տեղեկագրում չի հրապարակվել և «Գլավսնաբ իմպորտ» ՍՊԸ-ի էլեկտրոնային հասցեին չի ուղարկվել: Նշված արձանագրության մեջ՝ չափաբաժին 7-ի հետ կապված, մասնավորապես նշված է հետևյալը. «Գլավսնաբ իմպորտ» ՍՊԸ-ի գնային առաջարկը մերժվում է, քանի որ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին»: Ցանկանում ենք հրավիրել Ձեր ուշադրությունը այն փաստին, որ «ՀԿ-ԳՀԱՊՁԲ-21/02» ծածկագրով ընթացակարգի հետ կապված՝ «Գլավսնաբ իմպորտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ապրանքի ամբողջական տեխնիկական բնութագրում (հրավերի հավելված 1.1-ում), որևէ անհամապատասխանության առկայության մասին ծանուցում կամ շտկման

առաջարկություն պատվիրատուի կողմից երբևիցե չի ստացվել: Մինչդեռ, համաձայն ՀՀ Կառավարության 4 մայիսի 2017թ.-ի N526-Ն «ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» որոշման 7-րդ մասի 41-րդ կետի՝ «Եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը»: Քանի որ «ՀԿ-ԳՀԱՊՁԲ-21/02» ծածկագրով ընթացակարգի հետ կապված, «Գլավսնաբ իմպորտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ապրանքի ամբողջական տեխնիկական բնութագրում (հրավերի հավելված 1.1-ում) որևէ անհամապատասխանության առկայության մասին ծանուցում կամ անհամապատասխանության շտկման առաջարկություն պատվիրատուի կողմից երբևիցէ չի ստացվել, հետևում է, որ պատվիրատուն խախտել է վերոնշյալ իրավական ակտի պահանջը:

Բողոքի փաստացի և իրավական հիմքերը՝

Վերոգրյալից պարզ է դառնում, որ պատվիրատուի կողմից խախտվել է ՀՀ Կառավարության 4 մայիսի 2017թ.-ի N526-Ն «ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» որոշման 7-րդ մասի 41-րդ կետի պահանջը: Համաձայն ՀՀ «Գնումների մասին» օրենքի 46-րդ 3-րդ կետի 1-ին ենթակետի՝ մասնակիցն իրավունք ունի, նախքան պայմանագրի կնքումը, բողոքարկելու և գնահատող հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները գնումների հետ կապված բողոքներ քննող անձին:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ խնդրում ենք Ձեզ պարտավորեցնել «Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ-ին հրաժարվել իր կողմից հայտարարված «ՀԿ-ԳՀԱՊՁԲ-21/02» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի 7-րդ չափաբաժնի մասով «ՏԵԽՆՈՖՈՐՈՒՄ» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը և տվյալ չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչել «Գլավսնաբ իմպորտ» ՍՊԸ-ին՝ որպես

համարժեք տեխնիկական բնութագրեր ներկայացրած մասնակիցներից նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից»:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 02.04.2021թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է բողոքը:

2. «Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ-ի ներկայացրած փաստերը և հիմնավորումները.

«Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

«Արտադրողի լիազորագրի պահանջը՝ (MAF)-ը, տարածված պրակտիկա է ՀՀ պետական, ինչպես նաև միջազգային մրցույթներ կազմակերպելիս: Դրա նպատակն է ապահովել միայն օրիգինալ արտադրված ապրանքներով առաջարկների մասնակցությունը մրցույթում, որոնք մատակարարվում են արտադրողի կողմից արտոնագրված գործընկերների միջոցով, և որոնց վրա գործում են արտադրողի երաշխիքային և սպասարկման պայմանները: Արտադրողի լիազորագրի պահանջով պատվիրատուն բացառում է կեղծ, խոտանված և վերաթողարկված, վնասված, թերի և այլ տեսակի ոչ արտոնագրված արտադրանքի մատակարարումը, որոնց համար հասանելի չեն արտադրողի պաշտոնական երաշխիքային և սպասարկման ծառայությունները: Վերոնշյալ փաստաթուղթը չի համարվում Հայաստանի Հանրապետություն պաշտոնապես ներկրման հավաստագիր և փաստաթղթի պահանջը չի պարունակում որևէ հակամրցակցային պայման: Հաշվի առնելով վերոգրյալը՝ արդիական ենք համարում արտադրողի լիազորագրի պահանջը՝ անորակ և չարտոնագրված ապրանքներից զերծ մնալու նպատակով:

Արտադրող մի քանի ընկերությունների պաշտոնապես ներկայացվածությունը Հայաստանի Հանրապետությունում, այդ բրենդների և նրանցից յուրաքանչյուրի պաշտոնապես գրանցված և արտոնագրված մի քանի դիստրիբյուտորների առկայությունը ստեղծում է հավասար մրցակցային դաշտ շուկայում գործող բազմաթիվ այն ընկերությունների համար, ովքեր ցանկանում են մասնակցել հրապարակված մրցույթներին և նախագծերին:

Արտադրողի կամ ՀՀ տարածքում արտոնագրված դիստրիբյուտորների նամակ-հավաստագրի պահանջը պատվիրատուին զերծ կպահի պետական միջոցներով անորակ, կասկածելի ծագման և արտադրության, օգտագործված, վերանորոգված սարքավորումներ ձեռք բերելու ռիսկերից, հնարավորություն կընձեռնի պաշտոնական ճանապարհով գնված ապրանքների երաշխիքային և հետերաշխիքային սպասարկում և տեխնիկական աջակցում իրականացնել արտադրողների պաշտոնական սպասարկման կետերում, համապատասխան որոկավորում ստացված մասնագետների կողմից:

Պաշտոնապես գրանցված և արտոնագրված սպասարկման կենտրոնների առկայությունը հնարավորություն է տալիս պատվիրատուին, անհրաժեշտության դեպքում ստանալ այլընտրանքային հնարավորություն, երաշխիքային և հետերաշխիքային ժամանակահատվածում օգտվել մասնագիտացված կենտրոնների որակավորված մասնագետների ծառայություններից, և մեկի անգործության դեպքում, օգտվել մյուս սպասարկման կենտրոնի ծառայություններից՝ այդ կերպ բացառելով գնորդի որևէ կախվածությունը մատակարարից»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 02.04.2021թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր հայտնել են վերը նշված գրությամբ հայտնած դիրքորոշումը:

4. ԳԲՔԱ-ՆԳ-2021/19 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲՔԱ-ՆԳ-2021/19 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ-ն իր կարիքների համար համակարգչային տեխնիկայի ձեռքբերման նպատակով հայտարարել է «ՀԿ-ԳՀԱՊՁԲ-21/02» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով Ընթացակարգի 7-րդ չափաբաժնի մասով հայտ են ներկայացրել «Գլավսնաբ իմպորտ» ՍՊ և «Տեխնոֆորում» ՍՊ ընկերությունները:

2.«Գլավսնաբ իմպորտ» ՍՊԸ-ն ներկայացված բողոքով վիճարկում է Ընթացակարգի 7-րդ չափաբաժնի մասով իր հայտը մերժելու և նույն չափաբաժնի մասով «Տեխնոֆորում» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումները:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 16.03.2021թ. նիստի թիվ 04 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի 7-րդ չափաբաժնի մասով «Տեխնոֆորում» ՍՊԸ-ն ճանաչվել է ընտրված մասնակից՝ որպես նվազագույն գնային առաջարկ և գնման ընթացակարգի պահանջները բավարարող հայտ ներկայացրած մասնակից:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «Գլավսնաբ իմպորտ» ՍՊԸ-ի 29.03.2021թ. ներկայացված բողոքը՝ կից նյութերով, ԳԲՔԱ-ՆԳ-2021/19 բողոքի շրջանակներում «Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ-ի կողմից ներկայացված դիրքորոշումը՝ կից փաստաթղթերով, և գործով առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջություն է, ներառյալ՝ գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը:

Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) ***գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.***

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ***<u>ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:</u>***

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝

1) ***<u>իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.</u>***

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ,

բ. ***<u>պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ</u>***, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի զ) պարբերության համաձայն՝ ***հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ ապրանքների գնման դեպքում իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը***, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ ***<u>հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: Ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին:</u>***

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ ***<u>եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ</u>*** ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային

ստորագրությամբ, ապա ***հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:*** Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: ***Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:***

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ ***եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:***

Ընթացակարգի հրավերի 8.9-րդ կետով սահմանվում է, որ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Ընթացակարգի հրավերի 8.10-րդ կետով սահմանվում է, որ եթե սույն հրավերի 8.9-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Այսպես, «Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ-ն իր կարիքների համար համակարգչային տեխնիկայի ձեռքբերման նպատակով հայտարարել է «ՀԿ-ԳՀԱՊՁԲ-21/02» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով Ընթացակարգի 7-րդ չափաբաժնի մասով հայտ են ներկայացրել «Գլավսնաբ իմպորտ» ՍՊ և «Տեխնոֆորում» ՍՊ ընկերությունները:

«Գլավսնաբ իմպորտ» ՍՊԸ-ն ներկայացված բողոքով վիճարկում է Ընթացակարգի 7-րդ չափաբաժնի մասով իր հայտը մերժելու և նույն չափաբաժնի մասով «Տեխնոֆորում» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումները:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ «Գլավսնաբ իմպորտ» ՍՊԸ-ն ներկայացված բողոքով մասնավորապես հայտնել է հետևյալը. «*Գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 04 արձանագրությամբ արձանագրվել է, որ Ընկերության հայտը մերժվել է, քանի որ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մինչդեռ՝ «Գլավսնաբ իմպորտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված տեխնիկական բնութագրում (հավելված 1.1-ում) որևէ անհամապատասխանության առկայության մասին ծանուցում կամ շտկման առաջարկություն պատվիրատուի կողմից Ընկերությունը չի ստացել: Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ-ի կողմից «Գլավսնաբ իմպորտ» ՍՊԸ-ն շտկում իրականացնելու վերաբերյալ էլեկտրոնային ծանուցում ստացել է միայն այն հիմքով, որ հայտի փաթեթում բացակայում էր լիազորագիրը՝ տրամադրված կազմակերպության տնօրենի կողմից հայտի հետ կապված փաստաթղթերը ստորագրած աշխատակցին*»:

Այս տեսանկյունից, ուսումնասիրելով «ՀԿ-ԳՀԱՊՁԲ-21/02» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գործողությունների հաջորդականությունը, արձանագրում եմ հետևյալը.

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 09.03.2021թ. նիստի թիվ 02 արձանագրության համաձայն՝ գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետը, որոշել է մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և առաջարկել «Գլավսնաբ իմպորտ» ՍՊԸ-ին մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկելու տնօրենի լիազորագրի և էլեկտրոնային ստորագրությունը ապահովող աշխատակցի կողմից ստորագրման բացակայությունը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 11.03.2021թ. նիստի թիվ 03 արձանագրությամբ արձանագրվել է, որ կասեցված ժամանակահատվածում «Գլավսնաբ իմպորտ» ՍՊԸ-ն ներկայացրել է շտկված անհամապատասխանությունը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 16.03.2021թ. նիստի թիվ 04 արձանագրությամբ արձանագրվել է, որ «Գլավսնաբ Իմպորտ» ՍՊԸ-ի ներկայացված էլեկտրոնային հայտում առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին:

Նույն արձանագրությամբ կայացված որոշման համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը Ընթացակարգի 7-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից է ճանաչել «Տեխնոֆորում» ՍՊԸ-ին՝ որպես նվազագույն գնային առաջարկ և գնման ընթացակարգի պահանջները բավարարող հայտ ներկայացրած մասնակից:

Միաժամանակ արձանագրում եմ, որ ԳԲՔԱ-ՆԳ-2021/19 բողոքի քննության շրջանակներում 02.04.2021թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի ընթացքում Պատվիրատուի ներկայացուցիչը հայտնել է, որ Ընկերության հայտը մերժվել է և վերջինիս չի տրվել շտկման հնարավորություն, այն հիմքով, որ Ընկերության հայտով ներկայացված հավելված 1.1-ը՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, չի համապատասխանել հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես՝ Ընթացակարգի հրավերի պայմանագրի նախագծին կից ներկայացված Հավելված 1.1-ով գնվող ապրանքի ամբողջական նկարագրի 7-րդ չափաբաժնի մասով պահանջ է եղել, որ մատակարար Ընկերությունն առաջարկվող ապրանքներին կից պարտավոր է ներկայացնել արտադրող Ընկերության կողմից տրամադրվող MAF հավաստագիր, մինչդեռ Ընկերությունը իր կողմից հայտով ներկայացվող Հավելված 1.1-ով հրաժարվել է ներկայացնելու MAF հավաստագիր:

Եվ այսպես, Կարգի 41-րդ կետի համաձայն՝ ***<u>եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ,</u>*** ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա ***<u>հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:</u>*** Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: ***<u>Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:</u>***

Վերը նշված իրավակարգավորմամբ հստակ սահմանվում է, որ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Ընդ որում՝ Կարգի 42-րդ կետով սահմանվում է, որ ***<u>եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է</u>***:

Մինչդեռ, ուսումնասիրելով Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գործողությունների հաջորդականությունը, գտնում եմ, որ վերջինիս կողմից թույլ են տրվել Կարգի 41-րդ կետով, Ընթացակարգի հրավերի 8.9-րդ կետով սահմանված պահանջների խախտումներ, քանի որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, 16.03.2021թ. նիստի թիվ 04 արձանագրությամբ «Գլավսնաբ Իմպորտ» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված Հավելված 1.1-ում՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում, արձանագրելով անհամապատասխանություն հրավերով սահմանված պահանջների նկատմամբ, վերջինիս չի տվել Կարգի 41-րդ կետով սահմանված պահանջի համաձայն արձանագրված անհամապատասխանությունը շտկելու հնարավորություն:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջություն է: Միաժամանակ գնումների գործընթացի կազմակերպման կարգը սահմանող ՀՀ կառավարության 05.04.2017թ. N 526-Ն որոշումը հստակ կարգավորում է գնման գործընթացի իրականացման կարգը՝ փուլ առ փուլ և ժամկետները:

Այսպիսով՝ համապատասխան ընթացակարգային կարգավորումներ նախատեսելն ինքնանպատակ չէ և ուղղված է կամայականություններից խուսափելուն և ժամանակին

գործողություններն իրականացնելուն, քանի որ յուրաքանչյուր դեպքում ուղղված է իրավունքների և պարտականությունների իրագործմանը:

Նման խախտումներով իրականացված գործողությունների արդյունքում գտնում եմ, որ պետք է դադարեցնել «Տեխնոֆորում» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը և «Գլավսնաբ իմպորտ» ՍՊԸ-ի նկատմամբ կիրառել Կարգի 41-րդ կետով սահմանված պահանջը՝ մանրամասն նկարագրելով «Գլավսնաբ իմպորտ» ՍՊԸ-ի հայտում հրավերով սահմանված պահանջների նկատմամբ առկա բոլոր անհամապատասխանությունները:

Վերը նշված փաստերով պայմանավորված՝ գտնում եմ, որ Ընկերության բողոքը սույն մասով հիմնավոր է և ենթակա է բավարարման:

Անդրադառնալով Ընկերության կողմից բողոքով ներկայացված երկրորդ պահանջին, այն է՝ «Գլավսնաբ իմպորտ» ՍՊԸ-ին Ընթացակարգի 7-րդ չափաբաժնի մասով ճանաչել ընտրված մասնակից՝ որպես համարժեք բնութագրեր ներկայացրած մասնակիցներից նվազագույն առաջարկ ներկայացրած մասնակից, ապա գտնում եմ, որ բողոքի պահանջը սույն մասով ենթակա է մերժման, քանի որ Ընկերության նկատմամբ նախ պետք է կիրառվի Կարգի 41-րդ կետով սահմանված պահանջը:

Վերը նշված հիմքերով պայմանավորված և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. «Գլավսնաբ իմպորտ» ՍՊԸ-ի կողմից 29.03.2021թ. ներկայացված բողոքը բավարարել մասնակի.

- պարտավորեցնել «ՀԿ-ԳՀԱՊՁԲ-21/02» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝ դադարեցնել «Տեխնոֆորում» ՍՊԸ-ին Ընթացակարգի 7-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը,
- բողոքի պահանջ՝ Ընթացակարգի 7-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչել «Գլավսնաբ իմպորտ» ՍՊԸ-ին՝ որպես համարժեք բնութագրեր ներկայացրած մասնակիցներից նվազագույն առաջարկ ներկայացրած մասնակից, մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**